ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅ ԳՅՈՒՂԵՐԻ «ԿՏՐԻՃՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԱՍԻՆ

(Պատմա-ազգագրական ակնարկ)

Խ. Ա. ՓՈՐՔՇԵՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առևտրական և արհեստավոր երիտասարդների շրջաններում գոյություն են ունեցել ամուրի կտրիճների միություններ, որոնք հաճախ կոչվել են Եղբայրություններ։

Հայտնի է, որ 1280 թ. Երզնկա քաղաքում կազմակերպվել է «Կտրիճաց միաբանություն», որի կանոնադրությունը գրել է հայտնի գիտնական և բանաստեղծ Հովհաննես Երզնկացին։ Այդ կանոնադրությունը այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում։

Նորագույն հետազոտությունների հիման վրա հայտնի է նաև, որ այդպիսի «կտրիճաց եղբայրություններ» գոյություն են ունեցել Անիում, Վանում, Կարինում և այլ վայրերում։

Հայաստանում ստեղծված քաղաքական դժբախտ դրության հետևանքով, X—XI դարերի շեմքին և այնուհետև տեղի ունեցան խոշոր զանգվածային գաղթեր դեպի Սև ծովի ափերը, Ղրիմ, Մոլդավիա, Արևմտյան Ուկրաինա, Լեհաստան, Տրանսիլվանիա և այլ ապահով վայրեր, ուր գաղթականները նույնպես ունեցել են կտրիճներին միավորող կազմակերպություններ։

Մինչև վերջերս սեզ մոտ աչքաթող էր արված այդ միությունների ուսումնասիրության գործը։ Վերջին տարիներս, սակայն, մեր գիտական պարբերականներում հրապարակվեցին մի քանի բոլանդակալից հոդվածներ, նվիրված այդ երևույթի հետազոտությանը[1]։

Մասնագետների գործը հեշտացնելու նպատակով և «կտրիճվորաց եղբայրությունների» մասին ճշգրիտ կարծիք կազմելու համար ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Նոր-Նախիջևանի հայ գյուղերի կտրիճների միությունների վերաբերյալ մեր վաղուց ի վեր հավաքած նյութերի վրա, նյութեր, որոնք արտացոլում են հայ գեղջուկի ոչ հեռու անցյալի կենցաղն ու սովորույթները։

Նոր-Նախիջևան քաղաքը և շրջակա գյուղերը հիմնեցին 1780 թ. Ղրիմից բռնագաղթի ենթարկված հայերը։ Նրանց բերել էր ռուսաց կառավարությունը առևտուրը զարգացնելու և հարավային Ռուսաստանի բերրի հողերը մշակելու համար։

Կաֆա, Ղարասու-Բազար, Բախչիսարայ, Կյոկլով, Սիմֆերոպոլ և Օրբազար քաղաքների հայ բնակիչները միացան և հիմնեցին Դոն գետի Նոր-Նախիջևան քաղաքը, իսկ գյուղացիք հիմնեցին ուկզրում Ջալթըր, Թոփտի, Մեծ-Սալա, Փոքր-Սալա և Նիսվիտա գյուղերը, հետո նաև վեցերորդ՝ Կատարինավան գյուղը։ Մեր դարի քսանական թվականներին այդ գյուղերում ապրում էր շուրջ 30 հազար հայ։ Ամենամեծ գյուղը Թոփտին էր, որ 1913 թ. ուներ շուրջ 9 հազար բնակիչ։ Ջալթըրը մի քիչ պակաս էր, մյուսները՝ ավելի պակաս։ Ամեն գյուղ բաժանվում էր մահալաների (թաղերի)։ Թոփտին ուներ 10 թաղ, Ջալթըրը՝ 6, Մեծ-Սալան՝ 6, Փոքր-Սալան՝ 4, Նիսվիտան՝ 2։

Անցյալ դարի վերջին տարիներին բոլոր հայ գյուղերում էլ կային կտրիճների միություններ, որոնք կոչվում էին «Ավետիսի տներ»։ Ամեն թաղ ուներ իր առանձին կտրիճների միությունը, այսինքն՝ իր Ավետիսի տունը։

Այդ Ավետիսի տները գրված կանոնադրություն չունեին։ Իշխում էր չգրված օրենքը, այսինքն՝ դարերով սրբագործված սովորությունը։

---

[1] Տե՛ս Լ. Խաչիկյան, Երզնկայում 1280 թ. կազմակերպված «Եղբայրությունը», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12։ Նույնի Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1920 թ.), «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1962, № 6։ Վ. Գրիգորյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «կտրիճվորաց եղբայրությունների» մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, № 2։ Այս հարցին տարբեր առիթներով անդրադարձել են ուրիշ հետազոտողներ ևս։ Տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմությունից, հատ. 1, Երևան, 1958, էջ 72։ Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, գիրք 1, 1957։ Նույնի Գ. Ախվերդյանի և Դ. Շիրմազանյանի նամակափոխանակությունը Վրաստանի և Պարսկաստանի համքարությունների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2։

Ավետիսի տան անդամ կարող էր դառնալ ամեն մի ամուրի կտրիճ, 15—16 տարեկանից սկսած մինչև ամուսնանալը։ Ամուսնությունը զրկում էր կտրիճին Ավետիսի տան անդամ լինելու իրավունքից, նրան անվանում էին «տանտեր» և նա այլևս չէր կարող մասնակցել կտրիճների գործերին։

Ավետիսի տան անդամ կարող էին լինել անխտիր բոլոր կտրիճները. դասը և դասակարգը, տնտեսական դրությունը, զբաղմունքը ոչ մի դեր չէին խաղում։

Ավետիսի տները գործում էին միմիայն ձմեռվա ամիսներին, աշնանացանը վերջանալուց մինչև գարնանացանը սկսվելը։

Ամեն տարի աշնանը թաղի կտրիճները հավաքվում էին ընդհանուր ժողովի և ընտրում Ավետիսի տան նախագահ (որը Զալթըրում կոչվում էր խառդավագի, իսկ բոլոր մյուս գյուղերում՝ միքիթ-աղասի), մեկ կամ երկու օգնական, որոնք վարում էին Ավետիսի տան տնտեսությունը։ Օգնականներից մեկը վարում էր գանձապահի պաշտոնը։ Կտրիճները Ավետիսի տանը տալիս էին անդամավճար, որը տարեկան 50 կոպեկից ավելի չէր լինում։ Ավետիսի տները իրենց սեփական շենքերը չունեին։ Խառդավագիները և միքիթ-աղասիները Ավետիսի տների գործելու շրջանում վարձում էին մի տուն կամ մի մեծ սենյակ, որտեղ կտրիճները հավաքվում էին։ Դրանք կոչվում էին Ավետիսի տներ, որովհետև առաջին հերթին այնտեղ սովորում էին ավետիսներ երգել։ Սովորում էին նաև պարեր, նոր երգեր. կարդում էին հանրամատչելի գրքեր, լսում հեքիաթներ, հանելուկներ էին ասում և այլն։ Տան ղեկավարը՝ խառդավագին կամ միքիթ-աղասին, լավ ավետիս երգողներից և պարողներից մեկ կամ երկու հոգու նշանակում էր ուսուցիչ և պարտավորեցնում բոլոր նորեկներին սովորեցնել ավետիսներ, իսկ հների հետ զբաղվել սերտողությամբ։ Ամեն երեկո պարապմունքները սկսվում էին ավետիսների վարժապետների դասերով։ Ուսուցիչներն ունենում էին առհասարակ հաստ տետրակներ, որտեղ գրված էին լինում ավետիսները։ Նորեկները արտագրում էին իրենց տետրակների մեջ ոտանավորի բառերը և անգիր անում։ Ուսուցիչները սովորեցնում էին միմիայն երգի եղանակը և պարերը։ Ավելի դժվար էր պարապել անգրագետների հետ։ Նրանց սովորեցնում էին նախ խոսքերը անգիր անել, և ապա՝ եղանակներն ու պարերի շարժումները։

Ավետիսները շատ հին ծագում ունեն։ Նրանք բոլորն էլ Հայաստանում գոյություն ունեցած, Կ. Կոստանյանի, Մնացականյանի և Վրթանես Փափազյանի ժողովածուներում զետեղված ավետիսների տարբերակներն են։ Կրոնական է նրանց ծագումն ու բովանդակությունը և բոլորն էլ կապված են Քրիստոսի ծննդյան տոնի հետ։ Նրանք գաղթականների հետ Հայաստանից անցել են Ղրիմ, իսկ այնտեղից բռնագաղթի ենթարկվածների հետ չվել Նոր-Նախիջևան։

Ամեն տարի ճրագալույծի երեկոյան, իրենց տանը թաթախման սեղանը վայելելուց հետո, կտրիճները հավաքվում էին իրենց թաղի ավետիսի տանը, կազմում 4-5 հոգուց բաղկացած խմբեր, թաղի տները բաժանում այդ խմբերի մեջ և խումբ-խումբ ման գալիս իրենց հանձնված տները։ Խմբերը գլխավորում էին ավագները։ Ավագները ներս էին մտնում, իսկ մյուս անդամները՝ կանգնում նախասենյակում։ Ավագը դիմում էր տան տիրոջը՝ «Շնորհավոր ծնունդ» խոսքերով, իսկ խումբը նախասենյակից երգում էր՝

Զեզ ավետիս, մեզ ավետիս,
Զեզ և մեզ մեծ ավետիս։

Տանտերը դիմավորում էր նրանց և խնդրում ներս մտնել։ Խումբը, ներս մտնելով, սկսում էր ավետիսներ երգել։ Շատ տանտերեր իրենք ևս միանում էին խմբին և երգում։ Շատերը խնդրում էին երգել իրենց սիրած ավետիսները, ծերերը իրենց հմտությամբ փորձում էին երգող երիտասարդներին։ Տանտերերը կտրիճներին հրավիրում էին սեղանի մոտ, հյուրասիրում մի-մի լաժակ գինով կամ օղիով, տալիս մի-մի գդալ մեղրով կաղին, որ կոչվում էր կաղանդ։ Ամեն մի տանտիկին ավետիսի տան համար նախօրոք թխում էր մի մեծ խալաջ և երկու գաթա, որ տալիս էին ավետիս ասողներին։ Բացի դրանից, տանտերը, ըստ իր կարողության, տալիս էր 5—20 կոպեկ փող։ Այս ամենը բերում էին ավետիսի տունը և հանձնում միքիթ-աղասիին, որը փողը դնում էր դրամարկղը, իսկ խալաջներն ու գաթաները կառքի վրա բարձած, ուղարկում Նոր-Նախիջևան և ծախում շուկայում, որով զգալի գումար էր հավաքվում։ Ավետիսները երգվում էին տարին մեկ անգամ, բայց ավետիսի տանը դրանցով զբաղվում էին ամեն երեկո։

---

2 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը «Ազգագրական հանդես»-ում, 1910. XIX գիրք, էջ 102։

Հարսանյաց պարերգեր։

Պարերը կամ պարերգերը պսակի հանգեսի հետ անքակտելիորեն կապված ծիսակատարման մեջ ստացած հին երգեր էին, որոնք պսակի օրը երգում էին փեսայի ընկերները։ Առանց այդ պարերգերի փեսային չէր կարելի հաղցնել, նրան տնից դուրս հանել և հարսնատան տանել, ինչպես նաև չէր կարելի հարսին տնից հանել և փեսայի հետ եկեղեցի տանել։ Դրա համար էլ պարերը ավետիսի տների պարապմունքների մեջ բռնում էին շատ կարևոր տեղ։

Յուրաքանչյուր կտրիճ, ամեն մի միության անդամ պսակվելիս՝ հարսանյաց օրը պետք է շրջապատված լիներ իր ամուրի ընկերներով և շարժվեր նրանց երգերին համապատասխան։

Պսակի ծեսը լրիվ կատարելու համար կտրիճների պարերդերը նույնքան անհրաժեշտ էին, որքան քահանայի օրհնանքը։ Պարերդերի թիվը շատ էր դրանք էլ ավետիսների նման ունեին վաղեմի ծագում և դաղթականների հետ մայր հայրենիքից հասել էին Ղրիմ, այնտեղից՝ Նորնարիջևան։

Ամեն մի պսակվող կտրիճ ավետիսի տան անդամ էր։ Նա իր պսակով փաստորեն հրաժեշտ էր տալիս ավետիսի տան ընկերներին, զրկվում ավետիսի տան անդամ լինելու իրավունքից, դառնում «տանտեր»։

Պսակի օրը, դեռ չլուսացած, փեսայի ընկերները դալիս էին նրա տունը. այդպես վաղ գալիս էր նաև նվագախումբը և միասին գնում էին կնքահոր մոտ։ Կտրիճները պարեղանակներ էին երգում, իսկ նվագախումբը «կոչ-հավայով» դուրս էր հրավիրում կնքահորը։ Կնքահայրը դուրս էր գալիս, ձեռքին վառած կերոն, գիմավորում էր եկողներին և ներս հրավիրում։ Ներսում կնքահայրը և կնքամայրը հյուրասիրում էին եկողներին մի-մի բաժակ գինով կամ օղիով, քաղցրավենիքներով։ Կնքահայրը, կնքամայրը և նրանց 10—15 տարեկան տղան տոնական շորերը հագած, էկվորների հետ վերադառնում էին հարսանյաց տունը։ «Կոչ-հավայով» կնքահորը ներս էին տանում և նստեցնում թոռոպատը[3], հայելու տակ։ Ամենքը ողջունում էին կնքահոր և կնքամոր գալուստը, լիք-լիք բաժակները ձեռներին մոտենում ու ասում.

— Կնքահայր, կամքդ կատար։

Նրա առաջն էին շարում փեսայի շորերը, կոշիկները և գլխարկը։ Կնքամայրը բաց էր անում շորերի ծալքը, ցույց տալիս ամենքին։ Միքիթ-աղասիի ղեկավարությամբ փեսայի ընկերները նրա շրջապատում էին նեղ օղակով, սկսում երգել «փեսա հագվեցնելու» պարը։ Ընկերները հանում էին փեսայի հագի շորերը, կնքահոր թույլտվությամբ նրա առաջից վերցնում հարսանյաց շորերը և սկսում հագցնել։ Փեսայի սպիտակ նախշած շապիկը ուղարկում էր հարսը։ Ամենից առաջ հագցնում էին այդ շապիկը։ Փեսային նստեցնում էին փոքր նստարանին, հագցնում էին սև վարտիկ, սև կոշիկ՝ երկար խոնջերով, սև ժիլեթ՝ արծաթյա կոճակներով և սև չեքման։ Ամենավերջը նրա վզին կապում էին կարմիր ժապավեն, որ կոչվում էր շար։ Միքիթ-աղասին վերցնում էր կարմիր կտորից պատրաստած լայն գոտին և կապում փեսայի մեջքին։ Նույն միքիթ-աղասին վերցնում էր փեսայի գլխարկը և շրջված դնում նրա գլուխը։ Այնուհետև միքիթ-աղասին դիմում էր կնքահորը ճառով, որի բովանդակությունը լինում էր մոտավորապես հետևյալը.

«— Սիրելի կնքահայր, վերեն ընկել է մեկ հատ պաղած (սառած) խուշ, հոգեվարքի մեջ է։ Ջեսոք, յաշ թոչուն է, խալսեցունել կարելի է։ Մեր կտրիճները գտել են, բերել են հոս, մեղք է, պետք է նայել, տաքացնել, ուտեցունել և խմցնել, կշտացնել, պետք է կարմիր գինի, Հինդիստանի շերբեթ ջուր, տաք հալավ»,— և այլն։

Կնքահայրը, ըստ իր կարողության, միքիթ-աղասիին տալիս էր 3—5 ռուբլի՝ Ավետիսի տան օգտին։ Միքիթ-աղասին, փողը ստանալով, իսկույն շուռ էր տալիս փեսայի գլխին ծուռ դրված գլխարկը, հագցնում ինչպես հարկն էր։ Զգեստավորված փեսան համբուրում էր կնքահոր և կրնքամոր ձեռները։ Կնքամայրը ստուգում և շտկում էր փեսայի վզի շարը, ամրացնում այն գնդասեղներով։

Ձալթրրում մի քիչ ուրիշ տեսակ էր Ավետիսի տան փող հավաքելու ձևը։ Փեսայի ընկերները մերկացնում էին նրան և անդրավարտիկով նստեցնում գետնին։ Խառդավագին դիմում էր կնքահորը և փեսայի ազգականներին.

---

3 Թոռոպատ նշանակում է՝ ամենապատվավոր տեղ, որտեղ նստեցնում են պատվավոր հյուրերին։ Մեր կարծիքով դա ճենովացոց torus, toro խոսքն է։ Ճենովացոց տներում հյուրասենյակի գլխավոր պատի տակ դրված էր լինում բարձր բազկաթոռ, որ կոչվում էր torus, նրա վրա նստեցնում էին մեծապատիվ հյուրերին։ Վիրգիլիոսը այդպես torus-ի վրա էր նստեցրել Էնեասին (inde toro pater Eneas)։

«— Մուքարինե (Харьков) խոիթի (ապրանք գնելու) գնացել էր։ Բարիները բարձած ետ եկած ժամանակը, երկու ջուրը մեկզմեկի խառնված տեղը, ամեն բանը ջուրը տարել է, ինքն էլ հազիվ հազ փրկվել է։ Հանա մեր տղաքը խալսեցուցել են, բերել են հոս, հանա մորեմերկ նըստած է, փատըած, պաղած, քաղցած և հիվանդ։ Կնքահայր և պատվելի ծնողներ, հասեք օգնության։ Պետք է տաքցնել, հագվեցունել և ուտեցնել, ու խմեցնել, յարգմ արեք, խալսեցուցեք յաշ մաշտուն կյանքը»։

Ծնողները, կնքահայրը, մոտ ազգականները փող էին տալիս։ Խառդավագին ընդունում էր, հաճախ նկատողություն անում, որ քիչ է տվածները, իսկ կարիքը մեծ և այլն։ Փողերը հավաքելուց հետո խառդավագին սկսում էր ընկերների հետ հագցնել փեսային։ Երգում էին «փեսա հագվեցնելու» պար։ Ամենից առաջ հագցնում էին հարսի կողմից նվեր եկած նախշած սպիտակ շապիկը, որի վրա վերջում կապում էին շարը։

Երբ դուրսը լուսանում էր և երբ արդեն բոլոր հարսնևորները հավաքվում էին, նվագախումբը կնքահոր հրամանով նվագում էր «Առավոտ լուսոն», ամենքը սկսում էին պատրաստվել հարսնառ գնալու։

Կնքահայրը կնքամոր հետ և մյուս պատվավոր հյուրերը գնում էին նախօրոք պատրաստված կառքերով։ Զգեստավորված փեսան, բռնած կնքահոր որդու աջ ձեռքից (նրա ձախ ձեռքին լինում էր ժապավեններով և ծաղիկներով զարդարած մի հաստ կերոն), շրջապատված կտրիճների խմբով, ուղևորվում էր հարսի տունը։ Կտրիճները ամբողջ ճանապարհին երգում էին հարսնառ գնալու պարերգը։ Հարսի ծնողները ևս իրենց տանը կատարում էին հարսանյաց հանդես՝ բոլոր ազգականների մասնակցությամբ։

Փեսայի շքախումբը հարսի բակը մտնելուց հետո հարսի ծնողները, բոլոր հարսնևորները և նվագախումբը դուրս էին գալիս դիմավորելու կնքահորը և փեսային, նվագախմբերը նվագում էին կոչ-հավա։ Երկու կողմի հարսնևորները իրար խառնված, երկու կողմի երաժիշտների նվագածության տակ երկար ժամանակ պարում էին ազգային պարեր՝ օյին հավա, կանազրուր, քյոռօղլի և այլն։ Հարսի ծնողները ներս էին առնում կնքահորը, բոլոր հարսնառ եկողներին և շարունակում խնջույքը։ Ներսում հյուրասիրում էին հարսնառ եկող խնամիներին, պատվում գինով, օղիով և քաղցրեղենով։

Հարսի տան մեջտեղում, սեղանին դարսված էր լինում հարսի «ճեհեզը» (օժիտ)՝ շորերը, ոտնամանները, գլխակապերը և այլն։ Փեսային կանգնեցնում էին այդ սեղանի մոտ։ Տերտերի գալուց հետո զգեստավորված, դեմքը քողերով ծածկված հարսին հանում էին տան անկյունից և բերում փեսայի մոտ։ Քահանան օրհնում էր շորերը, կատարում կես-պսակ, հարսի ձախ ձեռքը մտցնում փեսայի աջ ձեռքը և հրավիրում եկեղեցի։ Փեսան աջ կողմից բռնած հարսի ձեռքը, ձախ կողմից՝ կնքահոր որդու, ընկերներով շրջապատված, հարսնևորների հետ ուղևորվում էր եկեղեցի։ Հարսի տնից մինչև եկեղեցի հասնելը կատարվում էր առանձին պարերգ։ Պսակի ծիսակատարությունը եկեղեցում վերջացնելուց հետո բոլոր հարսնևորները գնում էին փեսայի տուն։ Այս ճանապարհը նույնպես ուներ իր առանձին պարերգը, որի մեջ փեսան անվանվում էր թագավոր, հարսը՝ թագուհի և նրանց երջանիկ կյանք էր մաղթվում։ Փեսայի մայրը տանը սպասում էր։ Հենց որ պսակվողները մտնում էին բակը, նա իսկույն դուրս էր գալիս և տան դռանը կանգնում։ Շեմին դնում էին երկու դատարկ ափսե, որոնց վրայով անցնում էին հարսն ու փեսան և կոտրում, իսկ մայրը դիմավորում էր նրանց՝ մի ձեռքում երկու սպիտակ աղավնի, մյուսում՝ բրնձով և մանր դրամներով լի ափսե։ Աղավնիներին նա արձակում էր հարս ու փեսայի գլխների վրայով, իսկ բրինձն ու մանր դրամները թափում նրանց գլխին։ Փողերը հավաքում էին երեխաները, իսկ աղավնիները ստանում էին ազատություն։ Ծնողները իրենց որդուն և նորահարսին ներս էին տանում։ Դրանով կտրիճները վերջացնում էին պարերգերը։

Ավետիսներ և պարեր սովորելը ավետիսի տների գլխավոր պարապմունքն էր, բայց դրանով չէր սահմանափակվում նրանց գործունեությունը։ Ժողովուրդը, մանավանդ երիտասարդությունը, շատ էր սիրում երգ և երգեցողություն։ Գյուղերի ուսումնարաններն ավարտած տղաները լավ գիտեին Ռ. Պատկանյանի «Մայր Արաքսի» ու «Արի իմ սոխակ» երգերը, Մ. Նալբանդյանի «Մեր Հայրենիք»-ն ու «Ազատն աստված»-ը, Ղ. Աղայանի ճախարակի երգը, Ավ. Իսահակյանի «Դարդս լացեք»-ը և շատ ուրիշները։ Այդ ամենը երգում էին ավետիսի տներում։ Ամեն մի նոր լույս տեսած երգ շատ շուտով քաղաքից հասնում էր գյուղ և ավետիսի տներում դառնում ընդհանրության սեփականություն։

Ավետիսի տները հաճախ հրավիրում էին տեղական գուսաններին երգելու և նվագելու համար։ Այդ գուսանները կոչվում էին «շաոխըճիներ»։ Երկու դարերի շեմքին (XIX և XX) ամենաընդունված շաոխըճին Նիսվիտա գյուղի բնակիչ Հարությունն էր, որը հայտնի էր Հանթայի Արութին

անունով։ Նա իր երգերում գլխավորապես ծաղրի էր ենթարկում տեղական կյանքը և տեղական իշխանավորներին։ Շատ էին խավալ (սրինգ) նվագողները, որոնց մեջ հայտնի էր Թոփտեցի կույր Պարապետը։

Ավետիսի տներում շատ ընդունված էին հեքիաթները։ Ամեն գյուղ ուներ իր հեքիաթ ասողները։ Թոփտի գյուղում հայտնի էին Մատոսին Օվակիմը և Գոլին Նիկողոսը, որոնք երկու անբաժան ընկերներ էին։ Նրանց հրավիրում էին ավետիսի տները հեքիաթ ասելու։ Այդ հեքիաթները ունեին դրիմյան ծագում. նրանց հերոսներն էին խաները, խոճաները, վեզիրները, խաների աղջիկները, չորանները և այլն և ամեն տեղ հաղթողը բարին էր։

Անցյալ դարի վերջից սկսած, ավետիսի տներում մեծ հաջողություն ունեին Ռ. Պատկանյանի երգերը, մանավանդ Նոր-Նախիջևանի բարբառով գրվածները։ Մեծ հափշտակությամբ կարդում էին «Ջահ։ուն», «Պաց աղպարը», «Վաշտևորը», «Երևանը», «Փորսուխին Ավազը», «Վարդան Մամիկոնյանի մահը» և այլն։ Ամեն կտրիճ ցանկանում էր ունենալ Պատկանյանի գրքերը, դա ց գնելու հնարավորություն չկար։ Ավետիսի տները չունեին իրենց գրադարանները։ Կտրիճները ուսուցիչներից էին վերցնում գրքեր և բերում ավետիսի տները։ 1905 թ. հեղափոխությունից հետո ավետիսի տներում սկսեցին կարդալ «Նոր կյանք», «Լույս», «Դաղութ» շաբաթաթերթերը, որոնք լույս էին տեսնում Նոր-Նախիջևանում։

Ավետիսի տները դարմարվում էին ժամանակի պահանջներին և տեղական պայմաններին։

* * *

Ավետիսի տները, ինչպես ասվեց վերը, սկսում էին գործել աշնանը, դաշտային աշխատանքները վերջանալուց հետո և իրենց գործունեությունը դադարեցնում էին գարնանը, երբ վերսկսվում էին դաշտային աշխատանքները։ Միայն գատկի տոներին կտրիճները իրենց թաղերում սարքում էին մեծ սանճախ։ Սանճախի համար թաղի տներից վերցնում էին 13 արշին երկարություն ունեցող 6 հաստ գերան և մեկ՝ 7—8 արշին երկարություն ունեցող գերան, որ կոչվում էր ուորել։ Կտրիճները փողոցում փորում էին եռանկյունաձև շարված երեք փոս՝ մեկ արշին խորությամբ։ Այդ փոսերի դիմաց, 6—7 արշին հեռավորության վրա, նույն եռանկյունի ձևով փորում էին երեք այլ փոս։ Այդ փոսերի մեջ կանգնեցնում էին գերաններ և ամրացնում քարերով ու հողով։ Վեց գերանը ամրացնելուց հետո մի կամ երկու հոգի բարձրանում էին վեր, հաստ պարանի օգնությամբ միացնում երեք գերանների գագաթները և կապում ամուր պարանով կամ փոկով։ Նույնը անում էին և մյուս կողմի երեք գերանի հետ։ Ապա վերև էին բարձրացնում ուորելը[4], որի մի ծայրը դնում էին մի կողմի գերանների վերին կապի վրա, իսկ մյուս ծայրը՝ երկրորդ խմբի գերանների կապի վրա։ Այդպիսով, երկու կողմերը միացնում էին իրար։ Այդ միացնող ուորելը կոչվում էր առխանլբխ։

Այդ առխանլբխի վրա երկու կետերից ձգում էին լավ ամրացրած լայն փոկերից պատրաստված օկուզրաշիներ, այսինքն՝ եզների գլխակապեր։ Սանճախի բարձր լինելու պատճառով կախում էին մի քանի օկուզրաշի և միացնում իրար։ Երկու կարգ կախված փոկերից պատրաստված օկուզրաշիները ներքևում միացնում էին։ Դրանք կոչվում էին մեծ սանճախի խայիշ։ Ներքևում դնում էին լայն օկուզրաշի, որպեսզի հեշտ լինի վրան նստելը և օրորվելը։

Կտրիճները իրենք օրորվում էին խայիշի վրա կանգնած։ Ոչ-կտրիճները օրորվում էին նստած։ Նրանց օրորում էին կտրիճները։ Կանգնած էին լինում առհասարակ երկու զույգ կտրիճ, որոնք իրենց ձեռքի պարանով կամ բարակ փոկով նստողին կամաց-կամաց բարձրացնում էին։ Օրորող կտրիճների ձեռքի պարանը կամ փոկը կոչվում էր խրլամպար։

Օրորվելու հանում էին ծերերին, միջին հասակի մարդկանց, երիտասարդ «տանտերերին»։ Օրորում էին առհասարակ երկու զույգ կտրիճ, բայց երբ օրորվողը լինում էր մեծ պատվի տեր մարդ, օրորում էին երեք զույգ կտրիճ։ Աղջիկներին օրորվելու էին բերում մայրերը կամ այլ ազգականներ։ Նորահարսերին բերում էին սկեսուրները, կնքամայրերը և կամ մայրերը, որոնք կոչվում էին մեծվորներ։ Օրորվողները փող էին տալիս 5—20 կոպեկ։ Երբ օրորվում էին նշանված աղջիկները, նրանց նշանածները ես փող էին տալիս։ Երեխաներին բերում էին մայրերը, տատերը և կամ պապերը։

---

4 Ուորել կոչվում է այն գերանը, որով խոտով, հարդով, հացահատիկների խուրձերով բարձած սայլի վրայի դեզը կոխում են և պարանով կապում։ Ոմանք այն անվանում են կոխիչ գերան։

Սանձախները գործում էին անընդհատ, երբ օր Այնու հետև «խայիչը» հանում էին և նորից ձգում հաջորդ կիրակի։ Ամբողջ օրը օրորվում էին, իսկ գիշերը կտրիճները քանդում էին սանձախը և գերանները տանում իրենց տերերի դուռը։ Սանձախների եկամուտը պատկանում էր ավետիսի տանը։ Բացի մեծ սանձախներից լինում էին և փոքր սանձախներ։ Վերջիններս սարքում էին բակերի մեջ 10—15 տարեկան տղաներն ու աղջիկները։ Սրանք ավետիսի տան հետ ոչ մի առնչություն չունեին։

Կուռաշներ (գոտեմարտեր)

Կուռաշի սովորությունը մեր գյուղերում և քաղաքում հին էր, բերված Ղրիմից, իսկ այնտեղ ղաղթականները անշուշտ բերել էին հայկական բնաշխարհից։

Կուռաշները տեղի էին ունենում եկեղեցական ուխտի օրը։ Ամեն մի եկեղեցի ուներ իր ուխտի օրը։ Ամեն գյուղ ուներ իր եկեղեցին, միմիայն Թոփտի գյուղում կար երկու եկեղեցի։ Ամեն ուխտի ժամանակ գյուղական վարչությունը հասարակության հաշվին անպատճառ գնում էր մի մեծ գեր եզ, մի աչառ և մի քանի ոչխար՝ մատաղի համար։ Բացի այդ, մատաղ էին բերում ուխտավորները։ Նրանք բերում են գլխավորապես ոչխարներ և կամ 1—2 տարեկան աչառներ։ Այդ բոլոր անասուններին նախատոնի երեկոյան ժամերգության ժամանակ բերում էին եկեղեցու դուռը։ Եկեղեցուց դուրս էին գալիս զգեստավորված հոգևորականները և մեծ թափորով օրհնում կենդանիներին։ Դրանից հետո այդ բոլոր մատաղացու անասուններին տանում էին գյուղվարչության բակը և այնտեղ մորթում։ Նախօրոք, ավետիսի տների տղաների օգնությամբ, ամեն տնից հավաքում էին մի-մի հաց և բուլղուր։ Սայլերով ման էին գալիս բոլոր թաղերը և մատաղը եփելու համար աթար հավաքում։

Գյուղական վարչություններն ունեին Ղրիմից բերած խոշոր պղնձյա կաթսաներ։ Մատաղի միսը ամբողջ գիշերը եփվում էր այդ կաթսաների մեջ։ Եզների և գոմեշների գլուխները չէին եփում, թողնում էին կուռաշի համար։ Պատարագը վերջանալուց հետո, եփած մատաղի միսը կըտոր-կտոր մանրացրած, մեծ կաթսաներով բերում էին եկեղեցու բակի դռան մոտ և մի կտոր հացի հետ բաժանում բոլոր ուխտավորներին։ Գյուղական վարչությունը ունենում էր մի քանի հարյուր փայտյա պնակ և գդալներ։ Մսի ջրով և բուլղուրով եփած մատաղ-ապուրը տալիս էին ծերերին։ Ծերերի այդ ճաշկերույթը տեղի էր ունենում առհասարակ ուսումնարանների շենքերում։ Ուխտի օրերը բոլոր մյուս գյուղերից և քաղաքից ուխտավորները գալիս էին լավ ձիեր լծած, իսկ կտրիճները՝ հեծած։ Մատաղը վերջանալուց հետո հավաքվում էին բոլոր կտրիճները և սկսվում էր կուռաշը։ Մրցում էին թաղը թաղի հետ, գյուղը՝ գյուղի հետ և բոլոր գյուղերը՝ քաղաքի հետ։ Ամեն թաղ և ամեն գյուղ, իր հերթին և քաղաքը, ունեին իրենց նամ տված (հայտնի) կուռաշչիները։ Անցյալ դարի կեսերին անհաղթելի է համարվել «կարճուկ Մառտինը», որի քաջությունը երգել են գուսանները.

Էկան գոտի գոտիի.
Առնվեցան ձեռք ձեռքի.
Թնդաց տանը գետինը,
Հավա էլլան թոզերը։
    Ապինը փաքքվեցավ
    Ու մեջքին խափմիշ արավ.
    Մառտինը մեկին բռնից
    Ճրկից վերուց ու քապլից։
    Աֆերիմ Մառտին. և այլն։

Բացի գյուղերից, մատաղներ էին անում նաև քաղաքում՝ Սուրբ Գեորգ եկեղեցու ուխտի օրը, որը լինում էր ապրիլի 23-ին (հին տոմարով) և Սուրբ Խաչ վանքի վարգևորի օրը։ Բոլոր գյուղերից գալիս էին Սուրբ Գեորգի ուխտին։ Այստեղ կտրիճները աղջիկներ էին ընտրում, որոնք խումբ-խումբ ման էին գալիս եկեղեցու ընդարձակ բակում։ Գյուղացիք մատաղի համար բերում էին ոչխարներ և աչառներ, մինչև իսկ գոմեշներ։ Նույնն էլ Սուրբ Խաչի վարգևորի օրն էր։ Աչառների և գոմեշների գլուխների վրա կուռաշ էին սարքում։ Մեզ հասել է մի երգ՝

Սուրբ Գեուրգի բաց ազպարը
Կուռաշ բացեց Լուսարարը.
Ձրուին փչեց իրեն զուռնան.
Հետո պարպար տառլ-բոռոզան։

...Կուռաշ կուգան կտրիճները,
Ակիր կանեն աղջիկները,
Մամաներր սոլովեն
Տեյմիշ կանեն հեռուեն:

Խրտոիլեզ և վարդևոր ուխտ էին գալիս թե՛ գյուղացիք և թե՛ քաղաքացիք։ Այստեղ հավաքվում էին կտրիճները և աղջիկները։ Նրանք խումբ-խումբ ման էին գալիս և նայում իրար, կտրիճները աղջիկներ էին ընտրում։ Հավանելու դեպքում ազգականներից մեկին ուղարկում էին աղջկա ծնողների մոտ խնամիական կապեր հաստատելու համար։

Մորթված անասունների գլուխը առնելու համար անհրաժեշտ էր հաղթել երեք կտրիճի, երեք հոգու կոնակի վրա պառկեցնել։

Հաղթող կտրիճը գլուխը վերցնում և հանձնում էր իր ավետիսի տան ընկերներին, նրանք եփում էին գլուխը մեծ կաթսայի մեջ և ամենքը միասին ուտում։ Մինչև գլուխը եփելը կտրիճները քեֆ էին անում, բերում էին ուտելիքներ և հրավիրում զուռնաչիներ։ Կտրիճները պար էին գալիս։ Պարում էին տեղական ժողովրդական պարեր՝ «Օյին հավա», «Խանազպար», «Մեծ-մամա», երգում տեղական ժողովրդական երգեր՝ «Հենտիք ինկա», «Ապոչան», «Ղարիր Մելքոն» և այլն։

Մեկ թաղի կտրիճները կարող էին մատաղի գլուխը ուտելու հրավիրել ուրիշ թաղերի կտրիճներին։ Ամեն ինչ կատարվում էր խառդավազիների և միքիթ-աղասիների կարգադրությամբ։

* * *

Մնում է ևս մի տոնակատարություն, որի մասին խոսելը հետաձգեցինք, որովհետև նրան ավետիսի տներից շատերը չէին մասնակցում։ Դա բարեկենդանի տոնն էր։ Մի ամբողջ շաբաթ ժողովուրդը անցկացնում էր ձիարշավների ու կերուխումի մեջ։ Ամենաջահել կտրիճները, խմբերի բաժանված, ման էին գալիս տնետուն։ Նրանք երեսներին քսում էին մուր և կամ հագնում դիմակ, կաշվե մուշտակները շուռ տված, բուրդը դուրս հանած մտնում էին թաղի տները։ Նրանցից մեկը, չորեքթաթ կանգնած, ձևանում էր արջ. ընկերները նվագում էին և նա պար էր գալիս տան մեջ։ Երկար պարելուց հետո նա հանկարծ առջևի ոտքերը (ձեռքերը) բարձրացրած կանգնում էր տանտիրոջ առաջ, որը վարձատրում էր նրան պարի համար։ Այդ դրամը նույնպես կազմում էր ավետիսի տան եկամուտը։ Մյուս ընկերները երգում էին զանազան զավեշտական քառյակներ, ծաղրում տեղական կյանքի պակասությունները։ Հաճախ մեկը հիվանդ էր ձևանում, ընկերները բերում էին բժիշկ, որ «թեթև թափելով», անպետք դեղերով, ծաղրելի միջոցներով բժշկում էր և ծիծաղ հարուցում։ Կային ավետիսի տներ, որոնք դուրսը, փողոցում սարքում էին կրկեսներ։ Տախտակամածերի վրա շինում էին բեմ, իսկ դիմակավորված կտրիճները կատարում էին խեղկատակների դերեր, ծիծաղ պատճառելով հասարակությանը։ Ռուսաց զինվորական ծառայության մեջ եղած կտրիճները հաջողությամբ ցույց էին տալիս մարմնամարզական վարժություններ։ Խեղկատակները տեղական բարբառով արտասանում էին երգիծական ոտանավորներ, ծաղրում տերտերներին, ժլատներին, տեղական հարուստներին, հողերը վատ վարողներին, անասունները քաղցած պահողներին և այլն։ Փողոցների բեմերում ելույթ ունեցող դիմակավորներին տեղական ժողովուրդը անվանում էր կամենտներ, որ անշուշտ իտալական comedia բառի աղավաղված ձևն է և, ըստ երևույթին, ժառանգություն է մնացել Կաֆայի ջենովացիներից։

Բարեկենդանի տոների վերջին օրը ավարտվում էր և ավետիսի տների ձմեռային գործունեությունը։ Հաճախ կտրիճները վերջին օրը կազմակերպում էին խոնոշմա, ընկերական քեֆ և «աղ ու հացի» երկուշաբթի սկսում դաշտային աշխատանքները։

* * *

Այսպիսով, ավետիսի տների եկամտի աղբյուրներն էին՝ կտրիճների անդամավճարները, հարսանյաց ժամանակ նվիրված փողերը, ծննդյան տոնի առթիվ ավետիս երգողների հավաքած գումարը, դատկի տոնի առթիվ տանճախների բերած եկամուտը և բարեկենդանի դիմակավորների հավաքած փողերը։ Այդ բոլորը միասին կազմում էին զգալի գումար, որը, ծերերի ասելով, հնում հատկացվել են գլխավորապես «խոնոշմայի», այսինքն՝ խնջույքի, ընկերական քեֆի ժամանակ։ Մեզ հայտնի է, որ անցյալ դարի վերջերից պատկերը այլ էր։ Ընդհանուր ժողովների որոշմամբ, ավետիսի տների հավաքած գումարը ծախսվում էր բարեգործական նպատակներով։ Շատ ընդունված

էր այդ փողերը ծախսել ջրհորներ փորելու, աղբյուրներ կառուցելու, աղքատ հիվանդներին, չունեվոր աշակերտներին օգնելու համար։

Ինչպես ասվեց վերը, ավետիսի տները չունեին կանոնադրություն։ Նրանք գործում էին դարերով սրբագործված անգիր կանոնների հիման վրա, ժողովրդի ստեղծած սովորութական իրավունքով։

Ավետիսի տները եկեղեցու հետ կապված հոգևոր միություններ չէին և ոչ էլ եկեղեցուն հակառակ գործող մարմիններ։ Ավետիսի տները չէին հպատակված որևէ աշխարհիկ իշխանության և գործում էին ինքնուրույն՝ որպես մասնավոր միություններ։ Նրանք բերվել էին Ղրիմից և հիմնվել տեղում Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի հիման վրա՝ որպես ազգային սովորութական իրավունքի վրա հիմնված միություններ։

Ավետիսի տները չունեին մարտական միություններ, կարիք չկար այդպիսի օրգանների գոյության։ Ապրում էին ապահով երկրում, առևտրական քարավաններ չունեին և ոչ էլ կարիք կար նրանց ուղեկցել ու ճանապարհին պաշտպանել ավազակներից։ Ավետիսի տները կապ չունեին և համքարության հետ։ Չնայած այդ ամենին, հանգիստ կարելի է ասել, որ ավետիսի տները մայր հայրենիքի և Ղրիմի «կտրիճվորաց եղբայրություններին» ժառանգներն էին, իսկ նրանց միքրիթաղասիները և խառդավագիները՝ նախկին «մանկտավագների» հետնորդները։

Մեկ է եղել նրանց հիմնական նպատակը՝ օգնել նեղության մեջ ընկած ընկերոջը։

Դարերի ընթացքում փոփոխվելով ու տեղի պահանջին ենթարկվելով, «կտրիճվորաց եղբայրությունները» Նոր-Նախիջևան էին հասել «ավետիսի տների» վիճակով։

Ավետիսի տներն էլ գնալով ստանում էին ակումբի ձև, նրանցում տարածվում էին ընթերցանությունը, թատերասիրությունը, երաժշտությունը և երգեցողությունը։ 1905 թ. հեղափոխությունից հետո Թոփտի, Ջալթըր և Մեծ Սալա գյուղերը ունեին իրենց թատերասիրաց ընկերությունները, Թոփտիի ընկերությունը ուներ իր սեփական թատրոնը։ Այդ գյուղերում սիրողները ներկայացումներ ու համերգներ էին տալիս։ Բոլոր գյուղերում մեծ հաջողություն էին գտնում Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը, «Պաղտասար աղբար»-ը, «Արևելյան ատամնաբույժ»-ը և այլ երկեր։ Ավետիսի տների կտրիճներից շատերը մասնակցում էին թատերասիրաց ընկերությանը։

Ինչ վերաբերում է Նոր-Նախիջևան քաղաքին, ապա ավետիսի տների գոյության մասին այդտեղ անուղղակի վկայություններ են մնացել միայն։ Անցյալ դարի սկզբներին Կոստանդնուպոլսից Նոր-Նախիջևան եկավ երգեցողության ուսուցիչ և տիրացու ստամպոլցի Օվանեսը։ Նա իր ձայնով հռչակվեց հայկական շրջաններում և ամուսնացավ Նոր-Նախիջևանում։ Նախիջևանցիք էկվորներին աղջիկ չէին տալիս, նմանապես եկվորների աղջիկների հետ չէին ամուսնանում։ Ստամպոլցի Օվանեսի ամուսնությունը շատերին գարմացրեց այնչափ, որ գուսանները երգ հորինեցին այդ առթիվ, որ մինչև հիմա երգվում է։ Այդ երգի բովանդակության համեմատ, հարսանյաց հանդեսին ներկա է եղել «միքիթ-աղասին», այսինքն՝ ավետիսի տան կառավարիչը։ Այդ առիթ է տալիս ենթադրելու, որ քաղաքում էլ ժամանակին գոյություն են ունեցել կտրիճների միություններ՝ ավետիսի տներ։

Ուշադրության արժանի է մի այլ դեպք։ 1846 թ. Նոր-Նախիջևանում 18 տարեկան երիտասարդ Սպիֆան Հակոբի Պոպոյանը իր հասակակիցների մեջ հիմնում է մի «Հոգևոր ընկերություն», որի նպատակն է եղել բարեգործություն անել «ամենօրհնյալ մորն ողորմության սբ. Աստվածածնի հովանավորության ներքո»։ Ընկերության անդամ կարող էին լինել 18 տարեկանից ոչ պակաս կտրիճները։ Իգական սեռը չէր մասնակցում։

Ընկերության անդամները տալիս էին անդամավճար, սկզբում՝ տարեկան 7 ռուբլի, իսկ հետո 12 ռուբլի։

Ընկերությունը կոչվել է «Հոգևոր ընկերություն», անդամները՝ «հետևողներ», ընկերության ժողովը՝ «Միաբանություն եղբարց», ընկերության նախագահը՝ «կարգապետ», իսկ նրա երկու օգնականները՝ «առաջավորներ»[6]։ Բայց կարոտյալներին նյութական և բարոյական օգնություն ցույց տալը ընկերության միակ նպատակը չի եղել։

Պոպոյանի միությունը հետևողներից պահանջում էր պաս պահել, չորեքշաբթի և ուրբաթ օրերը մինչև երեկո բան չուտել, խարազան կապել և այլն։ Նրանք իրենց հավաքույթներին շուրջառներ էին հագնում, պատարագի աղոթքներ կարդում, սաղմոսներ ասում և այլն։ Տարեց-տարի

---

5 Գ. Պատկանյան, Նոր-Նախիջևանի պատմությունը, Ն. Նախիջևան, 1917, էջ 69.

6 Ե. Շահազիզ, Նոր-Նախիջևանի Սուրբ Խաչ վանքը, Թիֆլիս, 1901, էջ 55։

աճելանում էր միության հետևողների թիվը։ Միությունը փող էր հավաքում, դրամագլուխ կազմելու համար վաշխառություն անում (18%-ով փող էին տալիս առևտրականներին), առևտրով հարստացնում իրենց գանձարանը։ Միության ծիսակատարությունները, գաղտնի ժողովները մեծ աղմուկ բարձրացրին քաղաքում։ Կարծում էին, որ Պոպոյանը նոր աղանդ է քարոզում, նոր եկեղեցի է ստեղծում։ Դա առիթ տվեց հոգևոր իշխանությանը՝ իր ուշադրությունը դարձնելու «Հոգեվոր ընկերության» վրա։ 1858 թ. Նոր-Նախիջևան ժամանած Գարրիել վարդապետ Այվազովսկու ձնշմամբ այն վերանվանվում է «Եղբայրություն խրախուսչաց ազգաշահ վաստակոց», հրաժարվում եկեղեցական ծիսակատարություններից և սկսում զբաղվել միմիայն բարեգործությամբ։

Այնուհետև սույն եղբայրությունը մի քանի տասնամյակ պահպանեց իր գոյությունը՝ որպես բարեգործական բնույթի կազմակերպություն, զգալիորեն նպաստելով հատկապես դպրոցական գործի բարելավմանը ոչ միայն Նոր-Նախիջևանում, այլև Հյուսիսային Կովկասի այլ հայաշատ գյուղերում, 1867-ից գործելով «Մարդասիրական ընկերություն Նոր-Նախիջևանի հայոց» անվամբ։

Ահա Նոր-Նախիջևանի այս կես աշխարհիկ, կես հոգևոր բնույթի միությունը ևս, թվում է, թե առնչվում է կտրիճվորաց միությունների հետ։

Խորհրդային կարգերի հաստատումը նոր էջ բացեց տեղի հայ բնակչության կուլտուրական կյանքում։ Հանգես եկան երիտասարդական ու մարզական նոր բնույթի կազմակերպություններ, բացվեցին խրճիթ-ընթերցարաններ և ակումբներ, որոնք արագորեն դուրս մղեցին հնագույն սովորույթների շատ մնացուկներ, այդ թվում նաև ավետիսի տների հետ կապված երիտասարդական միությունները։ Սակայն ժողովրդի կենցաղում վերափոխված ձևերով ընդհուպ մինչև Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանը պահպանված նախնադարյան-տոհմային կարգերի այս ուշագրավ հասարակական հիմնարկության վերապրուկների խորազնին հետազոտությունը արժեքավոր նորություններ կարող է տալ ինչպես հայ ժողովրդի պատմության ամենավաղգույն շրջանի սոցիալական կյանքի, նույնպես և հետագա դարաշրջաններում, պատմական այլևայլ պայմաններում այդ վերապրուկների այլափոխությունների և ժողովրդի ներքին կյանքում կատարած դերի մասին։